


Իրավապաշտպան

Չկա Հասարակության
անունը իրավունքի
Ubi societas ibi ius

Երկշաբաթերթ
թիվ 1 (4)
2007 փետրվար 15

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,
ուրախությամբ տեղեկացնում ենք, որ «Իրավական մշակույթ» երկշաբաթերթի և «Վասն արդարության» եռամսյա գիտամեթոդական



հանդեսի գլխավոր խմբագիր է նշանակվել տաղանդավոր բանաստեղծ և թարգմանիչ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆՆԸ:**
Ինչպես գիտեք, ՀՍԻԿ-ի պարբերականները կոչված են նպաստելու իրավական մշակույթի զարգացմանը, մարդու իրավունքների գաղափարների տարածմանը, հասարակական կյանքի առողջացմանը, բացահայտելու իրավունքի ճշմարիտ էությունն ու նշանակությունը, պահպանելով և հարստացնելով հոգևոր, ազգային և բարոյական դարավոր ար-

ժեքներն ու ավանդույթները. այս ամենն, անշուշտ, համահունչ են Սարուխանի մարդկային նկարագրին և բանաստեղծական էությանը...
Սա ընդօրինակման արժանի այն դեպքերից է, երբ ժողովրդի արժանավոր գավակը, բանաստեղծի քնարը մի կողմ չդնելով, լծվում է իրեն ծնած ժողովրդին ու Հայրենիքին անմնացորդ ծառայելու ամենօրյա գործին:
Մաղթում ենք արգասավոր աշխատանք:

ՀՍԻԿ-ի
նախագահություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը իրամանագիր է ստորագրել ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունը 2007թ. մայիսի 12-ին նշանակելու մասին:

ՀՀ նախագահի մամուլ գրասենյակ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՍ

2006թ. նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 25-ը անցկացվեց ՀՍԻԿ 2007-2010 թթ. ռազմավարական պլանավորման (ՌՊ) սեմինարը: Այն իրականացվեց ավելի քան 20 անհատների ակտիվ մասնակցությամբ (ՀՍԻԿ-ի, աշխատակազմի և համայնքի անդամներ, շահառուներ, աջակիցներ) և անցկացվեց միջազգային խորհրդատու պարոն Պասկալ Բոքերսի կողմից:



Աշխատանքային խումբը, վերլուծելով նախորդ ՌՊ-ն, ՀՍԻԿ-ի աջակիցների կողմից 2005թ. համաժողովում արված առաջարկները, ինչպես նաև ՀՍԻԿ 2001-2005թթ. գործունեության գնահատման գեկույցներում արտաքին գնահատողներ տիկին Ֆելիսա Թիբիթսի և պարոն Ժիրայր Էդիլյանի առաջարկները, վերլուծեց հիմնարար գաղափարները և որոշեց 2007-2010թթ. ՌՊ-ի կառուցվածքային շրջանակները:

Մասնակիցները ամասելի գոհունակության զգացում ունեցան, երբ պարզվեց, որ ՀՍԻԿ-ի հեռանկարն ու առաքելությունը մնում են անփոփոխ:

Առաջիկա չորս տարիների համար սահմանվել են հինգ հիմնական ռազմավարություններ՝ ինը մարտավարություններով և համապատասխան գործողություններով:

ՀՍԻԿ-ը հավատացած է, որ իր երկրորդ ՌՊ-ի հաջող իրականացումը նշանակալի բարեփոխություններ կկատարի մեր հասարակության իրավական մշակույթի զարգացման ոլորտում՝ առաջնորդվելով ընթացիկ ծրագրերով:

1. **Հայաստանում իրավական մշակույթի զարգացում** (2004թ. նոյեմբեր - 2007թ. սեպտեմբեր, ֆինանսավորող կազմակերպությունը՝ **Համագործակցության զարգացման միջեկեղեցական կազմակերպություն (ICCO)**),

2. **Հայաստանում իրավական մշակույթի զարգացմանն ուղղված մարդու իրավունքների կրթություն և հանրային տեղեկատվություն** (2007թ. հունվար - 2008թ. հունիս, ֆինանսավորող կազմակերպությունը՝ **Վրաստանում և Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակություն**),

3. **Իրազեկման և հակազդեցության բարելավում՝ Հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում** (2007թ. փետրվար - նոյեմբեր, ֆինանսավորող կազմակերպությունը՝ **ՄԱԿ-ի զարգացման ծրագիր**),

4. **Սահմանադրական օրինականության ամրապնդում՝ մարդու իրավունքների պաշտպանության միջոցով** (2007թ. փետրվար - սեպտեմբեր, ֆինանսավորող կազմակերպությունը՝ **Քաունթերփայթ ինթերնեյշնլ**):

«Իրավական մշակույթ» երկշաբաթերթը պարբերաբար և հետևողականորեն կլուսաբանի ծրագրերի իրականացման բոլոր փուլերը:

Սեփ. լրատվ.

Հրաչյա Սարուխանը (Հրաչիկ Լյուդվիգի Սարուխանյան) ծնվել է 1947 թվականին, Գուգարքի շրջանի Համգաչիման գյուղում (այժմ Մարգահովիտ): 1948-ին ընտանիքով տեղափոխվել են Կիրովական:

1963 թվականին ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան հանրապետական գեղարվեստի ուսումնարանի գեղանկարչության բաժինը: Վերջին կուրսից զորակոչվել է Խորհրդային բանակ, զորացրվելուց հետո ավարտել է ուսումնարանը և 1970-ին ընդունվել Վանաձորի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է ուսուցիչ, մանկավարժական ինստիտուտի գրականության և փիլիսոփայության կաբինետների վարիչ, Հ. Աբելյանի անվան պետատրոնի գրական մասի ղեկավար, «Կայծ» թերթի գրական աշխատող, ապա պատասխանատու քարտուղար: 1990 թվականին ընտրվել է Հայաստանի գրողների միության Վանաձորի բաժանմունքի պատասխանատու քարտուղար, այնուհետև նշանակվել է Սո. Ջորյանի տուն-թանգարանի տնօրեն, 1993-ի նոյեմբերից՝ տպարանի տնօրեն: Այժմ Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահն է:

ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆՆԸ գրական անունով հանդես է եկել 1966 թվականից՝ առաջին անգամ իր բանաստեղծությունները տպագրելով «Կայծ» և «Ավանգարդ» թերթերում: Ապա 20-ամյա բանաստեղծի ստեղծագործությունները տպագրվել են 1967-ին հիմնադրված «Գարուն» ամսագրի առաջին համարում...

1978 թվականից ԽՍՀՄ գրողների միության անդամ՝ Հրաչյա Սարուխանն ընտրվել է ԽՍՀՄ գրողների 7-րդ համագումարի պատգամավոր, նույն 1981 թվականին գործուղվել է Մոսկվա՝ սովորելու Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի երկամյա բարձրագույն դասընթացներում:

1983-ին կրկին վերադառնալով հայրենի քաղաք, նա ամենացորդ նվիրվել է գրական և մշակութային կյանքի զարգացմանը:

Նրա բանաստեղծությունների անդրանիկ՝ «Եզրագծեր» ժողովածուն լույս է տեսել 1977-ին և արժանացել «Տարվա լավագույն առաջին գիրք» մրցանակին:

Երկրորդ՝ «Հրաչք օրեր» ժողովածուն հրատարակվել է 1981-ին:

1989-ին լույս տեսած «Վկայություններ» գրքով բանաստեղծը դարձել է Ավ. Իսահակյանի անվան մրցանակի դափնեկիր:

1997-ին հրատարակվել է «Այլ ժամանակներ» ժողովածուն: Նույն թվականին լայնորեն նշվել է հեղինակի ծննդյան 50-ամյակը, նա արժանացել է «Հայաստանի գրողների միության ամենամյա մրցանակ»-ին՝ ՀԳՄ նախագահ Հրանտ Մաթևոսյանի ջերմ ընծայականով:

1998-ի մայիսին ՀՀ նախագահի կողմից Սարուխանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Նա «Լոռվա ասպետ» է նաև, եղել է ՀՀ Վանաձորի քաղաքային խորհրդի պատգամավոր, բազմաթիվ շնորհակալագրեր, շնորհագրեր ու պատվոգրեր է ստացել իր ստեղծագործական բեղմնավոր կյանքի ընթացքում:

1999-ին լույս տեսած «Աստծո առավոտ» խորագրով հատընտիրը վերջնականապես հաստատեց նրա ուրույն տեղն ու դերը Հայ գրականության մեջ: Հիշատակելի է նաև, որ նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով, իսկ իր կատարած բարձրարժեք թարգմանությունները հրատարակվել են առանձին գրքով ու անթրոլոգիաներով:

2006 թվականին հրատարակվել են նրա հաջորդ՝ «Սիրո հուշապսակ» և «Ի տրիտուր» ժողովածուները:

Բանաստեղծ, թարգմանիչ Հրաչյա Սարուխանը Հայաստանի գրողների միության նախագահության, հրատարակչական խորհրդի և ընդունող հանձնաժողովների անդամ է, հանրապետության գրական ու հասարակական կյանքի վանաձորաբնակ նվիրյալ...

Անկուսակցական է, երեք որդիների հայր:

Ստեղծագործում է ընթերցողը

Անվճար հանած ատամը մեկ էլ պիտի հանվի...

(Երգիծական պատմվածք)

Օրերից մի օր ատամն ցավաց: Անտեր մնա ատամի ցավը. ոչ դիմանալ է լինում, ոչ համբերել: Ով ուն անիծի ասի «ատամդ ցավա»:

...Անուն են մարգարեն մի օր մի տան մոտով անցնելիս լսում է ծանր տնքոց: Չարցնում է մարդկանց, թե ի՞նչ է պատահել, ասում են՝ կին է, ծննդաբերում է: Նա թե՛ ես էլ գիտեմ ատամն է ցավում...

Մի կողմից ատամի ցավը, մի կողմից էլ դրամի խնդիրն է անհանգստացնում. դրամ էլ չունեն, չգիտեմ ինչ անեն:

Իմ լավ հարևաններից մեկը լավ լուր տվեց ինձ, թե պետությունը ինձ նման դրամի խնդիր ունեցողներին խղճացել ու դեռ անվճար բժշկական ծառայություններ է թողել, ու իր սուղ բյուջեից վարձատրում է (ճիշտ է՝ ոչ շատ, բայց վարձատրում է. ճիշտ իմ ռոճիկին հավասար): Կարճ ասած՝ առայժմ վճարում է մեր փոխարեն, մինչև մեզ համար էլ մի դուռ կբացվի...

Որ իմացա, շատ ուրախացա: Առավոտյան տնքալով, բայց հույսով վագեցի ատամնաբուժարան: Չնայած ամենաառաջին այցելուն էի, բայց մտա երրորդը: Մտա...: Ո՛չ մտնեի...: Չգիտեմ կյանքի՞, թե օրվա ինչ-որ «անհաջողությունից» բժիշկը խիստ զայրացած էր և խոսում էր ինքն իրեն: Չմոռանամ ասել, որ մինչ այդ ամեն ինչ արդեն նախապատրաստված էր. անցել էի նախնական ստուգում, նկարված էր ատամն և հաստատ հանելու էր: Դեռ չեմ ուզում հիշել այն ցավը, որ քաշում էի:

Չայրացած բժիշկը, տեսնելով հերթական անկետան, հավանաբար ավելի վատ զգաց և իր ողջ զայրույթը թափեց ինձ վրա: Նրա վրա չազդեց ոչ իմ ծանր տնքոցը, ոչ ատամի ռենտգեն-նկարը, որն ապացուցում էր իմ ծանր վիճակը, և իր պաշտոնական, իրավունք ունեցողի հաստատումն ու զայրացած ձայնով ասաց. «Այսօր արդեն երեք հիվանդ անկետայով (անվճար) սրսկել են, էլ չի լինի, զնացեք, կգաք ժամը երկուսից հետո...»:

Ճիշտն ասած՝ ես կիսաշքանդ վիճակում էի և չհասկացա՝ ինչը էլ չի լինի, բայց մեխանիկորեն ենթարկվեցի իրավունք ունեցողի խոսքին: Ի՞նչ անես. դու ես «նրա ձեռքին», իրավունքն էլ իրենն է:

Դիմացա նաև մինչև ժամը երկուսը և նորից զնացի «փրկարարի» մոտ: Ինձ թվում էր, թե անցած կլինեի բժշկի զայրույթը, բայց

պարզվեց, որ նա ընդհանրապես դժգոհ էր այդ օրվանից... Երկրորդ հերթի բուժքույրը նոր էր անցել իր օրվա աշխատանքին և անտեղյակ էր կատարվածին: Որպես առաջին հիվանդ, կանչեց ինձ: Բժիշկը, հավանաբար տեսնելով իմ դատարկ ձեռքերը, նորից դժգոհություն արտահայտեց. «Ես մարդիկ իրենց միամտի տեղ են դրել, շատ միամիտ են»: Ես, առանց հնարավորություն ունենալու նրա դժգոհությանը բարձրաձայն բացատրություն տալու, պատասխանում էի մտքիս մեջ. «Չա, հա, այ ցավդ տանեն, միամիտ չեմ, գիտեմ ինչի ես դժգոհում, գիտեմ ինչ ես ուզում, բայց չունեն. որ չունեն՝ որտեղի՞ց տամ: Վխի պետությունը ինչքան քեզ է տալիս որպես աշխատավարձ, այդքան էլ ինձ է տալիս. ես քեզ որտեղի՞ց տամ: Թե ես ցավին հնար լինեի դիմանալու, մոտո՞ղ չէի գա ու փող չունենալու պատճառով էդքան թուլանումըն էլ չէի ուտի: Բայց դե արի ու ատամնացավին դիմացիր, թե փող չունեն...»:

Վերջը, գլուխներդ ինչ ցավեցնեն, ինչ ինձ հասավ, ձեզ չեմ ցանկանում..., ատամն անցեցի, եկա տուն: Մտածեցի, թե մի կերպ ցավից պո՞ճա: Պարզվեց, որ շտապել են, դեռ երկար պիտի ցավ քաշեն: Պարզվեց, որ ատամիս մի մասը մեջն է մնացել... Այսինքն, անվճար հանած ատամը մեկ էլ պիտի հանվի...

Հիմի դարդս այն է, որ դեռ քանի հատ էլ ունեմ հանելու: Ի՞նչ եմ անելու, չգիտեմ: Կոտրված են, բայց դեռ չեն ցավում: Ահով եմ սպասում ցավին: Կոտրվածը, ճիշտ է, վատ է, բայց դե ցավ չէ. բա որ սկսեց ցավը, էն էլ է՛ն դեպքում, որ հանած ատամիս մի մասը դեռ տեղում է և հաճախակի հիշեցնում է իր գոյության մասին:

Կինը անկողնում տնքում էր... Ամուսինը, թե՛ «Վյ կնիկ, կամ շտապ օգնություն զանգեմ, կամ զնանք մի կերպ»: - Ի՛, այ մա՛րդ, փող ունե՞ս, պատասխանեց կինը, բժիշկը, որ եկավ, ի՞նչ է անելու. առանց փողի ատամիդ կեսը հանում են, կեսը թողնում. սա էլ զալու է համ դեղն ինձանից ուզի, համ դիագնոզը:

ԼԵՆԱ ՎԱՐՊԱՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնել ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն ՈՐՈՇՈՒՄԻՑ

Հոդված 130. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(Հ Հ Ք Բ Ե Ա Կ Ա Ն Օ Ր Ե Ն Ս Պ Կ Ի Ք)

ԳՈՐԾԵՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Օրենքները մշակվում են առանձին անհատների կողմից և շրջանառության մեջ դրվում բոլորի համար:

Մենք՝ հայերս, իրավական մշակույթի բազմադարյա պատմություն ունեցող ժողովուրդ ենք: Դեռևս դարեր առաջ Մխիթար Գոշը ստեղծեց իր «Պատաստանագիրքը», որը մի մեծ աշխատություն է օրենքների և օրինապահության մասին: Դրան հետևեց Սմբատ Գունդստաբլի համանուն աշխատությունը:

Թեև մենք հին ազգ ենք ու իրավական մշակույթի հարուստ փորձ ունենք, սակայն մեր օրենսդրական դաշտում դեռևս կան բացեր, որոնք լրացնելու համար մեծ է սիստեմատիկորեն կազմակերպվող սեմինար պարապմունքների դերը՝ մատաղ սերնդի իրավական մտքի զարգացման (ձեռք բերման)

ուղղությամբ:

Այս գործում կարևոր ու մեծ ներդրում ունի ՀՍԻԿ ՀԿ-ն, որը, Կրթության զարգացման ակադեմիայի (ԿՁԱ) «Երիտասարդության և համայնքների գործունեության ծրագրի» Վանաձորի գրասենյակի կողողինատոր Լուսինե Մինոյանի նախաձեռնությամբ, Մարգահովիտ համայնքի «Երիտասարդական գործողությունների ակումբում» (ԵԳԱ) կազմակերպել էր սեմինար, որին մասնակցեցին խորհրդի անդամները և գյուղապետարանի աշխատակիցները:

Սեմինարը արդյունավետ էր, և մասնակիցները հնարավորինս լրացրին իրենց իրավական գիտելիքների պաշարը:

Սեմինարի վերջում մասնակիցներին շնորհվեցին վկայագրեր:

ԵՐԲ ԽԱԽՏՎՈՒՄ Ե ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

(Երեխաների հոգեկան անդորրը չխռովելու նպատակով անուններ չենք հրապարակում)

Մայրը հեռացել էր միակողմանի ծնողազուրկ երեխաներից և յուրացնում էր պետության կողմից նրանց տրվող թոշակն ու նպաստը. ասես այդ երեխաները պիտի «օղով» սնվեին. ահա թե ինչու մեծ է խնդիրը...

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածը նախատեսում է. «Ծնողները իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման ու կրթության համար»:

Դե արի ու այք փակի այս իրողության վրա, արի ու մի ասա, որ օրենքով պաշտպանվածությունից զատ՝ երեխաներին անհրաժեշտ է ծնողի ուշադրությունը, նրա հոգածությունը: Ավելին երեխայի իրավունքները սկսվում են ընտանիքից. ծնողն է, որ պետք է պաշտպանի զավակի իրավունքները, հոգա նրա կարիքները, զբաղվի դաստիարակությամբ՝ ապագայում այդ զավակին պետության քաղաքացին ու լիիրավ տեղը դարձնելու համար: Երևի «մեր հերոսուհին» մոռացել էր այս մասին, կամ ընդհանրապես տեղ-

յակ չէր, որ երեխան էլ իրավունքներ ունի, և այդ իրավունքները պետք է պաշտպանի ծնողը:

Այս ֆոնի վրա, կարծում եմ, ավելորդ է մշել ՄԱԿ-ի «Հռչակագրի» ու «Համաձայնագրի» մասին, որոնք ստորագրել է նաև Հայաստանը:

Հիմք ընդունելով երեխաների տատի դիմումն այն մասին, որ «Երեխաների մայրը յուրացնում է պետության կողմից նրանց տրվող թոշակն ու նպաստը և ներկայումս բնակվում է Դիլիջան քաղաքում, և այդ գումարները չեն ծախսվում երեխաների կարիքների համար», Մարգահովիտի խնամակալության հանձնաժողովը որոշեց. «Երեխաների խնամակալ նշանակել տատիկին, որպեսզի նա տնօրինի այդ գումարները և ծախսի երեխաների կարիքների համար»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի Երիտասարդական գործողությունների ակումբի (ԵԳԱ) լրատվական բաժնի ղեկավար

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գրականության ամբիոնի վարիչ Մեսրոպ Պապիկյանը հանրապետության այն եզակի գիտնականներից է, ովքեր զբաղվում են ոչ միայն գրականության պատմությամբ ու գործուն գրաքննադատությամբ, այլև ժամանակակից գրականագիտության բազմաբնույթ խնդիրներով:

Միայն 2006թ. առանձին գրքերով լույս տեսան նրա «Գրականագիտական բառարան» (Արեն Սանթրոյանի համահեղինակությամբ), «Եպիկական կերպարի ստեղծման չափումները» և «Գրական առեղծվածներ» աշխատությունները: Վերջինում գետնից բերված «Դարավերջի պոետիկայի քննարկական անհատը» ուսումնասիրությունը արդի հայ բանաստեղծական աշխարհի մի ուրույն պատկերասրահ է, որ անխուճ հետազոտողի ջանասիրության շնորհիվ շարունակաբար լրացվում է ընթերցող հասարակությանը ոչ անհայտ նորանոր դեմքերով:

Գ Ա Ր Ա Վ Ե Ր Զ Ի Պ Ո Ե Զ Ի Ա Յ Ի Ք Ն Ա Ր Ա Կ Ա Ն Ա Ն Հ Ա Տ Ը

Չարենցով սկսվող 20-րդ դարի քննարկական հերոս-անհատի տիպը՝ հենվելով և՛ 19-րդ դարավերջի, և՛ 20-րդ դարասկզբի մտավորական անհատի կերպարային նվաճումների վրա, մտավ գարգացման նոր փուլ: Չարենցի ընդգծված պոետական Ես-ը նոր շրջադարձի սկսողն էր: Այն իր մեջ խտացնում էր հզոր անհատի անհավասարակշռ հեռանկարը, որը ժառանգեցին Պ.Սևակը, Գ.Եմինը, Հովհ.Շիրազը, Հ.Սահյանը, ուրիշներ: Ջարգացման սևական աստիճանն արդեն («Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս») ամբողջացման էր միտում գերմարդու՝ ինտելեկտուալ արիական արմենոիդ տեսակի, ձևավորումը:

Հետևանքային շրջանում հանդես եկան պոետներ, որոնք շարունակեցին այն:

Հենրիկ Էդոյան: «Ազատ մտքի» դրսևորման արիական արմենոիդ ինտելեկտուալ գերմարդը կանգնած է ոչ միայն հայրենի գրական հողի վրա, այլև աշխարհի ժամանակատարածական խաչմերուկում: Լինելով և՛ հայրենի, և՛ աշխարհի մշակույթների, ժամանակների հոգեորդին, Էդոյան էրուդիտ անհատը, մի խումբ ուրիշ ճշմարիտ պոետների հետ, 20-րդ դարավերջի մեր «Արծաթե դարն» է ստեղծում հայոց պոետիայում:

Գեղագիտական իդեալի՝ լինի երկիր, թե մարդ, պոետական փնտրումը՝ տեսակի կատարյալ գեղեցիկը մուսայի դեր ունի նրա պոետիայում: Որպես մտածող, որպես դարավերջի պոետական ֆենոմեններից մեկը՝ մենք գործ ունենք ինքնատիպ մտածողի հետ, որը դրվել է պոետական ձևի, կերպի մեջ, որն ստեղծել է հայոց քննարկության 20-րդ դարավերջի հետազոտությունը:

Վահագն Մուղնեցյան: Հետաքրքիր է Մուղնեցյանի քննարկական անհատը: Պոետը առնական մի ուժայր է, լիարժեք, առանց բարոյությունների ու թերարժեքության, որի՝ իր հետ հիմնականում նույնացող քննարկական անհատը մի այնպիսի ուժայր է, որը կարող է, որպես պոետական ոգի, բեղմնավորել անգամ ամուլ հոգիները: Արիական արմենոիդ գերմարդու Ուժայր տեսակը:

20-րդ դարասկզբին Ե. Չարենցը՝ մտնելով աստվածամարդու կերպի մեջ և ձգտելով փրկել «կյանքի հիմքերը անդունդ ընկած» իր երկիրն ու ժողովրդին, հոժարակամ գնում էր ողջակիզման. «Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձից բացի»: 20-րդ դարասկզբն ու դարավերջը նմանության եզրեր ունեն՝ «Գիշեր է խորունկ - խավարի դար», ազգային վիճակը ևս կարծես գոհ է պահանջում ազգային փրկության գոհասեղանի, ուստի և Մուղնեցյանը հնչեցնում է. «Ես լինեմ վերջին Ջոհանվեր»: Միաժամանակ, քննարկական անհատը խեղճ աղոթող է, այլ լինելով արմենոիդի Ուժայր տեսակը, կարող է նաև հրամայական դրսևորել «Հնչեցրու ժամը գահանդական/Չայրագնիր - զսպիր- գանազանիր -/Աշխարհապարփակ և Հիմնարար/ Մեղքը անմեղից հեռու վանիր»: Ուժայրի հզորությունը լիցքավորվում է նաև Աստծո գոյությամբ: Վշտի, ողբի, աղոթքի, ճիչ ու աղերսանքի մարգարեական ղողանջներով պոետական իր առաքելությունն է ավետում պոետը:

Արմեն Շեկոյան: Արիական արմենոիդ, չքծնող, ըմբոստ, քննարկական անհատի տիպն է նրա պոետիայի կենտրոնական կերպարը: Այնքան հզոր են պոետի մերկացումները՝ բողոք, ծաղր, հումոր, պարոդիա, ընդվզում, որ սիրո համար կարծես տեղ ու տարածք չի մնում: Չգնաժամի դրամա է: Չքավորության ու դատարկ գրպանի անգործության, վշտի ու տառապանքի, սոցիալական չարիքի բերած ու անհոգի չինովնիկ - պաշտոնյայի սրած դրաման կուտակված հայ մարդու ուսերին: Պոետը երկրի նոր վերքն է խխտորոշում, որ գոնե դրանով օգնի վերքի սպիացմանը: Ճշմարիտ հայրենասերի պոետիան՝ տառապող, կսկիծ ապրող ըմբոստ ոգի, որը չի քծնում իր ժողովրդին, ասում է մերկ ու դառը ճշմարտություններ: Մեծ սրտի, տառապած ոգու, ցավող զավակի խոսք է Հայրենիք Մեծ Մորը:

Սոնա Վան: Արիական արմենոիդի խելքով Լիլիթ, մարմնով Եվա հայուհու տեսակն է նրա քննարկական անհատը: Գոհ ու վայելած տիկնոջ պոետիա է: Երբ

կինն է իր բարեմասնությունները դարձնում գեղարվեստական պատկեր, երբ կինն է խոսում էրզնային իր գոնաների մասին ու գտնում նորերը, ապա հանդես է գալիս որակական նորը: Երբեմն ձեռնոց նետելու խիզախությամբ ասված-պատկերված մարմնական իր հրաշալիքները սիրո մենախոսության խոստովանություն ու սիրո հայտեր են: Թերաթեքություն ու դրա վախճը չկա: Լիարժեք կին է՝ սիրող ու սիրվող, տրվող արժանիքին, և սիրո հետ կապված կանացի ոչ մի քայլ մեղք չէ նրա համար: «Այնքան սիրում եմ/մեղեդին ես այն/որը ծնվում է/ իմ սուրբ մեղքերի/ ռիթմիկ կրկնությամբ»: Կանացի իր մենախոսության շարժիչը պարադոքսն է: Արիական արմենոիդ՝ յանկիացող հայուհու տեսակն է նրա քննարկական անհատը: Ինչքան էլ կինը փորձի կերպափոխվելով մտնել տարբեր դերերի մեջ, քայլել «Քույր, Շամիրամ ու Աստված» ուղեծրով, նա հավատարիմ է մնում տեսակի էականին և կերպարային նրա «մետամորֆոզները» բերում են լիարժեք դրսևորումներ, ու ակամայից գոհացնում է կնոջ կերպափոխությունների մարդկային բովանդակությունը:

Սամվել Զուլոյան: «Ինձնից մինչև ես» - ը հուշում է. ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ ես գալիս, ու՞ր եմ գնում, ես մարդուց մինչև մարդ գնացողս, որ դրվել եմ պոետի կերպի մեջ: Քննարկական անհատի եռմիասնության աստիճաններն են ինձնիցը, մինչևը և եսը, որոնք միմյանցից առանձնանալով, չեն անջրպետվում իրարից, այլ ներթափանցվում են միմյանց մեջ՝ ստեղծելով կապի ու զարգացման աստիճանականություն: Ինձնից մինչև եսը գնացող դրամայի արմենոիդ դրամատիկ անհատն է նրա պոետական չամբողջացած հերոսը:

Արմեն Մարտիրոսյան: Արիական արմենոիդի տեսանող անհատը մտնում է տարբեր կերպերի մեջ՝ գնչու, դերվիշ, բամբուկահար ..., մնալով ինքն իր հետ, մնալով Արմեն Մարտիրոսյան: Տարի մեջ գտած պոետական գյուտը օգտագործելով որպես հրման կետ, այդ գյուտը դարձնելով թեֆրենիկ տող-պատկեր, պոետն իր հերոսի հետ կառուցում է տաղի մատուռը մարդուն հրավիրելով և՛ ըմբռնելու խոսքի իմաստային նրբերանգային ելևէջումն ու երկմահիրը, և՛ գտնելու իրեն, և՛ աղոթելու: Անսովոր բարեբանություններով նրա անհատին են աղերսվում հայրենի մեծերը, և մշակութային ծանր բեռ ուսած քննարկական անհատը ինքը ևս մտնում է 21-րդ դարի գրանշակույթի արժեքների մեջ:

Արտաշես Ղազարյան: Պրկված տարածքի ու տխուր ժամանակի որդին է պոետը: Թերաթեքությունից գերծ արմենոիդ, որը կասկածի է ենթարկվում երբեմնի, ժամանակին հաճելի «Ճշտված» ճշմարտությունները: Կյանքային ստեղծված անդուր վիճակներից դուրս գալու ելքեր է փնտրում քննարկական անհատը, տագնապում է, կռվում, չի հաշտվում տխուր վիճակի հետ և արմենոիդի՝ վիճակից դուրս գալու ցեղային ելքի բնածին հավատն է հավաստում:

Հետաքրքիր են պոետի ինքնաբերականները մարդու իր տեսակի շուրջ: Ինքն իրեն չի քծնում, դադում է իրեն, հումորիկ ձեռ է առնում իրեն, սակայն բոլոր դեպքերում՝ արժանապատիվ, իր գեմի արժեքը իմացող: Նման այրը հիմնականում նույնական է քննարկական անհատի հետ: Եվ ասպետական գծեր, արքայազնի, հոգնած հուսարի հատկանիշներ ունեցող մարդը դրանց դրականը փոխանցում է գերմարդու արմենոիդ քննարկական անհատ պոետին՝ նրան դարձնելով առավել հզոր:

Հովհաննես Գրիգորյան: Քննարկական անհատը վերլուծության է ենթարկում իր ժողովրդի պատմությունը՝ ստեղծելով պատմական ակնարկ ըստ Հովհաննեսի: Եվ պարադոքսալ ճանփորդության է գնում քննարկական անհատը՝ գտնելու որոշ ճշմարտություններ՝ երջանկություն, արդարություն, խաղաղություն և այլն, որոնք մեզ համար չեն: Մատների արանքով ավազի նման հոսող ժամանակի էջերն է թերթում պոետը:

Հոգս ու ցավերից խլացած երկրի չխլացած քչերից մեկն է նա, որը և՛ լսող է, և՛ տեսանող: Թշվառների



ծանր դրամայում բոլոր կերպերի ու կերպափոխությունների հիմքում ինքն է և՛ խմբավար, և՛ մասնակից, և՛ հանդիսատես, ու քննարկական անհատն անցնում է մարդկային կյանքի ու տարվա եղանակների միջով:

Մանկության դրամատիկ ուսուանում ինքն իր հետ է, իր մանկության հրեշտակների հետ, որոնցից մեկն էլ ինքն է:

Քաղաքացին ու հայը միասին են ամբողջացնում գերմարդու արմենոիդ տեսակ՝ քննարկական ու հումորիկ անհատին:

Էդվարդ Միլիտոնյան: Նրա բանաստեղծությունները կյանքի բազմադիմության, անցյալի ու ներկայի, պոետի կյանքային, պոետական, գեղագիտական, մշակութային, մտածումների, ապրումների շառավիղներն են ընդգրկում, և տարբեր երևույթները, առարկաները, կենդանիները և այլն ի մի են գալիս նաև պահի պոետիկայով: Դրանցով ստեղծվում է գրական-պոետական միջավայր, մթնոլորտ, որտեղ քննարկական իր պոետական «փորձարկումներն» է կատարում: Եվ, ի պատիվ պոետի, լուծումներն իրենն են, բարձր, նովելիկ-անակնկալ, էսսեային-մեղիտատիվ:

Քննարկական արմենոիդ անհատը համարձակվում է գտնել կնոջ գաղտնիքը. կամ ուժայր է, կամ էլ՝ Սասնա ծուռ և կամ էլ՝ երկուսը միասին՝ ուժայր Սասնա ծուռ:

Անուշ Նազգաշյան: Պոետի անձնական խիստ մարդկային սերը լիարժեքվում է հայրենիքի և ընտանիքի թևերով: Հայրենի տուն, թեկուզ տխուր վիճակում, բայց իրենն է, իր հպարտության ու լիարժեքության իր միակ ստնտուն, որի զավակն է պոետը, նրա վաղնջական հարուստ ու մեծ անցյալի և պայքարող-հաղթող ներկայի, առավել՝ դրանց զուգորդման ծնունդ հուսատու արագայի մայրացած արմենոիդ դուստրը:

Մերուժան: Մերուժանի տխրությունը, կուտանքները, մորմոքը անձնական ու քաղաքացիական բնույթի են ոչ միայն տառապած մարդու, այլև ոտնահարված քաղաքացու, որին հանիրավի զնդան են նետել, դարձրել տառապանքի ճամփորդ: Դրանց են գումարվում տարիքային, ազգային և չարիքի արմատներով ծնված մորմոք-խորալները, և այդ բոլորով ամբողջանում է չարչարանաց ուղիներով անցած հայ մարդու տիպը՝ դառնալով պոետիայում տխրության ասպետ, որին հալածանքի, կենաց դառնությունները չեն չարացրել: Արմենոիդի ասպետ տեսակն է Մերուժանի քննարկական անհատը:

Շանթ Մկրտչյան: Բարդ հեթանոս հզոր անհատն է պոետի տեսակը: Ազատ ձախրում է ժամանակային չափումներում, տարածական արգելափակոցներ չունի. ազգային ծողակալ դաշտը չի խանգարում նրա ձախարանքներին, հայտարարում է իր գտած ճշմարիտ արժեքները ու հիմնականում հասնում է դրանց: Մարդն է նրա հարազատը, որին գրկում ու համբուրում է որպես որդուն: Տառապանքը կրելով հոգու մեջ, չգտնելով ոչ մի էակ, որ իր արցունքները սրբի, պոետը գնում է հայկական պատրիզմի: Եվ սիրահարը արմենոիդի առնական տեսակն է, իր սեռի հզոր էներգալիքը, լիարժեք ու կատարյալ մարդ:

Թամարա Հովհաննիսյան: Իրոք, ուշագրավ է պոետի քննարկական անհատը: Գեղանի կնոջ իրավունքով՝ պահանջող «փափկասուն» տիկին է նրա քննարկական անհատուհին: Մնալով իր սեռի մեջ, չնոռանալով իր իգությունը՝ հաղթահարում է այն, որպես կանացի կին: Արիական արմենոիդ ազնվական կին է՝ ազատամիտ, հզոր, ինտելեկտուալ, կանացի: Կին է իր ամբողջության մեջ:



ԵՐԿՓԵՂԿՎԱԾ ՀՈԳՈՎ՝ ԻՆՔՆ ՈՒ ԻՆՔՋԻՆՔԸ. ԶՈՐՅԱՓԱՌԸ ՄԵՐ, ՄԵՐ ՀՐԱՆՏ ԳԻՆՔԸ...



«Ակօսի» հունվարի 19-ի համարում լույս տեսած այս հոդվածը դարձավ եղերաբախտ լրագրողի կարապի երգը: Նա սպանվեց նույն օրը... Նկատի ունենալով նյութի բացառիկությունը եւ արժանին մատուցելով ՀՐԱՆՏ ԳԻՆՔԻ հիշատակին, «Ազգ» օրաթերթի 2007 թ. հունվարի 27-ի համարից կատարում ենք սույն արտատպությունը:

Երբ Շիշլիի դատախազությունն իմ դեմ «թուրքերի ազգային ինքնասիրությունը նվաստացնելու» մեղադրանքով հետաքննությունը սկսեց, ես մտավախություն չեմ ապրել:

Դա առաջին դեպքը չէր: Նման դատական գործին մինչ այդ առնչվել էի Ուրֆայում: Երեք տարի շարունակ ինձ «թուրքերի նվաստացման» մեղադրանքով դատում էին զուտ նրա համար, որ 2002 թ. Ուրֆայում, մասնակցելով կոնֆերանսի, ելույթում ասել էի, որ «թուրք չեմ, այլ թուրքիայի հայ եմ»: Այն ժամանակ նույնիսկ տեղյակ չէի դատական նիստերի ընթացքից: Դրանք ինձ բոլորովին չէին հետաքրքրում: Դատավարությունն իմ բացակայությամբ առաջ էին տանում ուրֆացի փաստաբան ընկերներս:

Բավականին անհոգ էի նաեւ Շիշլիի դատախազությունում բացատրություն տալու ժամանակ: Ի վերջո, ակնհայտ էին ե՛լ գրածներս, ե՛լ մտադրությունս: Համոզված էի, որ դատախազը իմ հոդվածի առանձին որեւէ իմաստ չարտահայտող նախադասության փոխարեն կկարդա ամբողջությամբ, այսպիսով, հեշտությամբ կհասկանա, որ «թուրքերին նսեմացնելու» որեւէ մտադրություն չունեմ եւ վերջ կգտնի այս կատակերգությունը:

Վստահ էի, որ հետաքննությունը չի հանգեցնի իմ դեմ դատական գործի հարուցմանը:

Ինքնավստահ էի
Բայց ո՛վ զարմանք, դատական գործը հարուցվեց: Դրանով հանդերձ, լավատեսությունս չէի կորցրել: Այն աստիճանի, որ հեռուստահաղորդմանը ուղիղ եթերում ինձ մեղադրող փաստաբան Քերիմչիսիզի ղիմեցի, ասելով. «Թող շատ չոգեւորվի, դատարանն իմ դեմ ոչ մի դատավճիռ չի կայացնելու, դատապարտվելու դեպքում երկիրը կլքեմ»:

Ինքնավստահ էի, որովհետեւ հոդվածում թուրքերին նսեմացնելու որեւէ մտադրություն եւ դիտավորություն բացարձակապես չեմ ունեցել: Դա հստակ կհասկանային իմ հոդվածաշարն ամբողջությամբ ընթերցողները:

Ահավասիկ, Ստամբուլի համալսարանի դասախոսներից կազմված 3 հոգանոց հանձնաժողովը փորձագիտական եզրակացության մեջ հաստատում էր այդ փաստը:

Այսինքն, մտավախության համար պատճառ չկար եւ թվում էր, թե դատավարության որեւէ փուլում անպայման կուղղվի կատարված սխալը:

Մնում էր համբերել:

Բայց չուղղվեց:

Չնայած փորձագիտական եզրակացությանը, դատախազը պահանջեց իմ դատապարտումը:

Դրան հետեւեց դատավորի՝ 6 ամիս ազատազրկման վճիռը: Դատապարտման լուրն ստանալով, ես ինձ զգացի դատավարության ընթացքում սնուցածս հույսերի դառը ճնշման տակ: Շփոթված էի... Վիրավորվածությունս ու ընդվզումս գազաթնակետին էին հասել:

Օրեր, ամիսներ շարունակ դիմանում էի, ասելով. «Երբ դատարանը կկարճի գործս, այն ժամանակ դուք կզղջաք իմ դեմ ձեր ասած-գրածների համար»: Դատական յուրաքանչյուր նիստից հետո թերթերը լուրերի բաժնում եւ սյունաշարերում, իսկ հեռուս-

տատեսությունները հաղորդումներում ընդգծում էին, թե ես իբր ասել եմ. «Թուրքի արյունը թունավոր է»: Եվ ամեն անգամ ես, որպես «թուրքերի թշնամի», ավելի հռչակավոր էի դառնում:

Դատարանի միջանցքներում ֆաշիստները շովինիստական հայոյանքներով հարձակվում էին իմ վրա: Ինձ անարգում էին ցուցապաստառներով: Ամիսներ շարունակ ինձ հասցեագրվող հեռախոսազանգերի, էլեկտրոնային ու սովորական նամակների սպառնալիքները, որոնք հարյուրների էին հասնում, ամեն անգամ ավելի վտանգավոր բնույթ էին ստանում:

Մտածում էի, որ դատարանի որոշումը կիրառարակվի, ի հայտ կգա ճշմարտությունը, եւ այդ մարդիկ կամաչեն իրենց արածի համար:

Միակ զենքս անկեղծությունս էր

Սակայն, երբ հրապարակվեց դատավճիռը, ի չիք դարձան իմ բոլոր հույսերը: Հիմա արդեն մարդկային ամենածանր կացության մեջ էի: Դատավորը վճիռ էր կայացրել «թուրք ազգի» անունից եւ իրավաբանորեն հաստատել էր իմ՝ «թուրքերին նսեմացնելու արարքը»: Կարող էի ամեն ինչին դիմանալ, բայց ամենար էր դրա հետ հաշտվելը: Իմ համոզմամբ, եթե մեկը էթնիկ կամ կրոնական տարբերությունների պատճառով նսեմացնում է այն մարդկանց, որոնք հետ մույն երկրում է բնակվում, դառնում է շովինիստ, իսկ դա անմեղ էի:

Ահա այս հոգեվիճակով դիմեցի խմբագրատան դռան առջեւ սպասող մամուլի ներկայացուցիչներին, որոնք ուզում էին ճշտել երկիրը լքել-չլքելու մասին մինչ այդ ասածներս: Եվ հայտարարեցի նրանց. «Կխորհրդակցեմ փաստաբաններին հետ: Վճռաբեկ դատարան կդիմեմ: Անհրաժեշտության դեպքում նաեւ՝ Սարգոս իրավունքների ձեռնարկական դատարան: Այս ամենից հետո, եթե ինձ չարդարացնեն, ապա ես կլքեմ երկիրս, որովհետեւ այսպիսի մեղադրանքով դատապարտված անձն, ակամա նվաստացնելով մյուս քաղաքացիներին, չպետք է ունենա նրանց հետ գոյակցությունը շարունակելու իրավունքը»:

Այս խոսքերից հետո նորից հուզվեցի: Իմ միակ զենքն անկեղծությունն էր:

Սարկազմ

Որքան էլ զարմանալի լինի, այն մութ ուժը, որն ինձ թուրքիայում ջանում էր մեկուսացնել մարդկանցից եւ

է կայացնում:

Եվ մի՞թե այդ խորհուրդը չէր, որ ստորագրել էր համայնքային կալվածքները ազգային փոքրամասնությունից խլելու հանրակրթական որոշումների տակ:

Չնայած գլխավոր դատախազի ջանքերին

Այնուամենայնիվ, դիմեցինք: Բայց ի՞նչ:

Բարձրագույն դատական խորհրդի գլխավոր դատախազը եւս, ինչպես նշված էր փորձագիտական եզրակացության մեջ, նշեց, որ որեւէ հանցանք չի տեսնում եւ պահանջեց կարճել գործս: Չնայած դրան, խորհուրդն ինձ մեղավոր ճանաչեց:

Գլխավոր դատախազն առնվազն ինձ պես ճիշտ էր ըմբռնել իմ հոդվածի իմաստը. առարկեց խորհրդի որոշմանը եւ հարցը քննարկման ներկայացրեց խորհրդի լիազուսմար նիստում:

Բայց ինչ անեմ, որ ինձ սաստելու համար գործի լծված այդ հզոր ուժերը հետնաքեմում էին եւ, ամենայն հավանականությամբ, դատական գործընթացի յուրաքանչյուր փուլում շատերի համար անհայտ միջոցներով զգացնել էին տալիս իրենց ներկայությունը: Ահա թե ինչու դատական բարձրագույն խորհրդի լիազուսմար նիստը ծայրերի գերակշռող մեծամասնությամբ հայտարարեց, որ ես նսեմացրել եմ թուրքերին:

Ինչպես աղավնին

Ցավալի էր, որ նպատակին հասել էին նրանք, ովքեր ինձ մեկուսացնելու, տկար եւ անպաշտպան դարձնելու համար ջանք չէին խնայում: Ավելին, հասարակությանը կեղծիքներով ապակողմնորոշելու եւ սխալ տեղեկություններ հաղորդելու միջոցով նրանց հաջողվել էր ձեւավորել մարդկանց զգալի մի շրջանակ, որը Հրանտ Դիմքին դիտում էր իբրեւ «թուրքերին նսեմացնող» անձ:

Իմ համակարգչի հիշողությունը լի է այս շրջանակից տարբեր քաղաքացիների ուղարկած հարյուրավոր նամակներով, որոնք զայրույթ եւ սպառնալիք են պարունակում:

(Պետք է ասել, որ իմ տերմետային այդ նամակներից մեկն ուղարկված է Բուրսայից, որի բովանդակության վտանգավորության մտահոգությամբ դա հանձնել եմ Շիշլիի դատախազություն, սակայն առ այսօր որեւէ պատասխան չեմ ստացել, որի մասին հարկ եմ համարում տեղեկացնել):

Ինչ խոսք, չեմ կարող ասել, թե այս սպառնալիքները որքանով են իրատեսական, որքանով՝ ոչ:

Իսկ ինձ համար սպառնալիքի բուն աղբյուրը հոգեբանական այն տանջանքն է, որն ապրում եմ ինքս:

Ուղեղս տագնապած էր «Հիմա մարդիկ ի՞նչ են մտածում իմ մասին» հարցով:

Ցավոք, ներկայումս ինձ ավելի շատերն են ճանաչում, քան առաջ, եւ զգում եմ, որ մարդիկ շշուկով ասում են իրար. «Նայիր, սա այն հայը չէ՞»:

Ինձ պատող տանջանքի մի կողմում հետաքրքրությունն է, մյուսում՝ մտահոգությունը:

Մի կողմում՝ զգոնությունը, իսկ մյուսում՝ երկչտությունը:

Ինչպես աղավնին, Նրա պես հայացքս ուղղում եմ աջ, ձախ, հետ ու առաջ:

Գլուխս նրա գլխի նման անընդհատ շարժման մեջ է, իսկ շարժումները՝ նույնքան արագ:

Ահա սա է այն ամենի գինը:

Ի՞նչ էր ասում արտագործնախարար Աբդուլլահ Գյուլը: Ի՞նչ էր ասում արդարադատության նախարար Ջեմիլ Չիչեքը:

Ասում են. «Կարիք չկա 301-րդ հոդվածն այսքան չափազանցնելու: Մի՞թե այս հոդվածով որեւէ մեկը դատապարտվել կամ բանտարկվել է»:

Կարծես գին վճարելը միմիայն բանտարկություն է ենթարկում: Ահա ձեզ այս ամենի գինը... Ահա գին վճարելը...

Ով նախարարներ, դուք գիտե՞ք այս մասին, թե ինչպիսի ծանր գին է մարդուն դատապարտելն աղավնու երկչտությանը:

Գիտե՞ք: Մի՞թե երբեւէ աղավնի չեք տեսել:

«Կենաց-մահու» ասվածը

Ամենեւին հեշտ չեն իմ ապրումները, ընտանիքիս ապրումները:

Եղել են պահեր, որ լրջորեն մտածեմ երկրից հեռանալու մասին:

Հատկապես այն ժամանակ, երբ սպառնալիքներն ուղղվել են մերձավորներինս:

Այդ պահերին ես ինձ միշտ ճարահատյալ եմ զգացել:

Ըստ երեւոյթին հենց սա է «Կենաց մահու» ասվածը: Կարող էի հաշտվել իմ ճակատագրի հետ, սակայն հարազատներինս կյանքը վտանգելու իրավունքը չունեի: Կարող էի ինքս ինձ հերոսանալ, սակայն հերոսանալու համար հարազատը մի կողմ, նույնիսկ անծանոթի կյանքը վտանգել չէի կարող:

Ահա այսպիսի անելանելի պահերին ապաստանեցի ընտանիքիս, երեխաներիս եւ ամենամեծ աջակցու-

Հոգեվիճակս վախճվորած աղավնու է նման

ակնհայտ թիրախ դարձնել, կառչեց նաեւ իմ այս հայտարարությունից եւ դատական գործընթացի վրա ազդելու մեղադրանքով նոր հայց ներկայացրեց դատարան: Թեեւ ես այդ հայտարարությունը փոխանցել էի զանգվածային լրատվության բոլոր միջոցներին, սակայն նրանց աչքին երեւում էր միայն «Ակօսում» հրատարակվածը: Այս անգամ էլ «Ակօսի» պատասխանատուներն ու ես դատարանի առջեւ կանգնեցինք դատական գործընթացի վրա ազդելու համար:

Ըստ երեւոյթին, սարկազմ ասածը հենց սա է: Եթե ես մեղադրյալ էի, ուստի դատարանի վրա ազդելը, որպես մեղադրյալի, իմ տարրական իրավունք էր: Եկեք, տեսեք, որ մեղադրյալին դատեցին հենց դատական գործընթացի վրա ազդելու մեղադրանքով՝ առանց հաշտվի առնելու այդ իրավունքը:

«Հանուն թուրքական պետության»

Պետք է խոստովանել, որ բավականին կորցրել էի վստահությունս թուրքիայի «արդարադատության» ընթրման նկատմամբ: Ինչպե՞ս չկորցնել: Ի վերջո, այս դատախազներն ու դատավորները, որոնք բարձրագույն կրթություն ունեին, լինելով իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտներ, մի՞թե օժտված պիտի չլինեին իրենց կարողացածը ճիշտ ըմբռնելու կարողությամբ:

Սակայն այս երկրում, ինչպես բազմաթիվ պետական եւ քաղաքական գործիչներն են հայտարարում առանց վարանելու, դատական համակարգն անկախ չէ:

Եվ այս համակարգը պաշտպանում է ոչ թե քաղաքացիների իրավունքները, այլ՝ պետական կառույցների: Դատարանները քաղաքացիների կողքին չեն, այլ գտնվում են պետության վերահսկողության տակ:

Ընդ որում, միանգամայն համոզված եմ, որ իմ դեմ արձակված դատավճիռը, որքան էլ ստանա «հանուն թուրք ազգի» ձեւակերպումը, իրականում ընդունվել է ոչ թե «թուրք ազգի» համար, այլ «թուրքական պետության» անունից: Հետեւաբար, փաստաբաններս որոշեցին դիմել Բարձրագույն դատական խորհուրդ: Սակայն ո՛վ կարող էր երաշխավորել, որ այն մութ ուժերը, որոնք որոշել էին սաստել ինձ, չեն ազդի նաեւ վերոհիշյալ խորհրդի վրա:

Բացի այդ, մի՞թե խորհուրդը միայն ճիշտ որոշումներ



ՀՀ առաջին նախագահ **L. Տեր-Պետրոսյանի**
1992թ. հունվարի 28-ի հրամանագրով
ազդարարվեց **Հայոց ազգային բանակի** ծնունդը:
Շնորհավորում ենք 15-ամյա
Հորելյանի առթիվ:



ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՂԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ (Հատվածներ՝ ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ համանուն գրքից)

Հայաստանի հոգևոր-քաղաքական դաշտում վերջին տարիներս իր անվան արժանի տեղ է գրավում ՆՇՂԵՒԻ գաղափարաբանությունը, որն ի գործ է վերածվելու հեղաշրջող գործոնի՝ ազգային կյանքի մի շարք ասպարեզներում, հանրային կեցությանը հաղորդելու նոր թափ և ուժակա-նություն: Հետևապես, ավելի քան կարևոր է ՆՇՂԵՒԻ ուսմունքի համարժեք ըմբռնումն ու անաչառ գնահատումը, այն հանրային գիտակցության սեփականություն դարձնելը:

ՆՇՂԵՒԻ անունը մեզ համար հավասարաթեք է ազգային մեծերին՝ Հայկ Նահապետից մինչև Խրիմյան Հայրիկ, շարք, որի մեջ կարելի է ընտրողաբար դասել էլի տասնյակ անուններ, ինչպես, ասենք՝ Արա Գեղեցիկ, Տիգրան Մեծ, Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Ներսես Մեծ, Տրդատ արքա, Սահակ Պարթև, Վարդան Մամիկոնյան, Եղիշե, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տաթևացի, Դավիթ Բեկ...:

Ինչպես ոսկեդարյան մեր մշակույթը աստվածային հրաշքով հառնեց ու հասավ մարդկության մեծագույն արարումներին, այնպես էլ Գարեգին ՆՇՂԵՒԻ 20-րդ դարի հայոց արհավիրքի ժամանակ բարձրացավ ազգային գաղափարաբանության երկնա-կամար և այնտեղից սկսեց հսկել մեր ոգու շարժը, ուղղությունը հարողդել մեր պատմա-ընթացքին:

Իբրև ազգային ոգու գերագոր պոռթկում՝ ՆՇՂԵՒԻ ուսմունքն իր հոգևոր արժա-նիքներով հավասարազոր է համամարդ-կային մշակութային գանձերին: Տևական դադարից հետո, հայոց պատմամշա-կութային ժառանգությունը համալրվել է մեր դասական մատենների, եկեղեցիների և մնացյալ սրբությունների կարգի նոր արժեքով: Այն, իբրև մեր ազգային ոգու գերագոր պոռթկում, իբրև մեծություն՝ մեր դարավոր ազատագրական պայքարի, մեր սրբության, արդարության, իմաստության հավաքական ձգտումի փառապսակումն է:

ՆՇՂԵՒԻ աշխարհայացքի, նրա մարդկային էության և գործի մեծության մասին խոսք ասելու համար, գոնե ծանոթության մակարդակով, պետք է իմանալ մշակութային այն հենքը, արժեքների համակարգը և սրբազան մի շարք իրողություններ, որոնք ձևակերտիչ դեր են խաղացել նրա ուսմունքի մեջ:

Ժամանակաշրջանի հեռավորությունը և ուսումնա-սիրությունները հնարավորություն են ընձեռում գիտակցելու Ձորավարի հոգևոր-մշակութային ասպարեզի մեծագործության համագործությունը նրա ռազմաքաղաքական սխրանքին, սակայն այդ երկուսի ըմբռնումի և մեկնաբանության միջև առկա են հսկայական տարբերություններ: Եթե Ձորավարի ռազմաքաղաքական գործունեությունը հիմնականում ճիշտ է ընկալվել և համընդհանուր գնահատանքի արժանացել, նույնը կարելի չէ ասել ՆՇՂԵՒԻ-մտավորականի աշխարհայացքի, գոյապայքարի նրա տեսության և ազգային հոգեմորոգման համակարգի մասին: Այս հակասությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ՝ ամեն մի գիտա-իմացական տեսության ըմբռնման համար պահանջվում է մտավորական ուժերի ներդրում, ժամանակի տրամադրում, ուշադրության կենտրոնացում և բավականաչափ համբերություն: Իմաս-տությանը հաղորդվելու համար անհրաժեշտ են նախնական ջանքեր՝ կրթերը մաքրելու և հոգեկան աշխարհի ազնվացնելու ուղղությամբ, որը նյութապաշտ ավերակերպ ունեցողների համար դժվար է, եթե ոչ անհնար, թեև Հանձարի մտքերը ծնունդ են առել և մտակերպավորվել մատչելի և անչափ գրավիչ ձևերով:

ՆՇՂԵՒԻ մտածելակերպն ու ոճը ունեն ինքնաձիգ հսկայական ուժ, և նրա ստեղծագործությունները պարզապես իրենց վրա են գանում ընթերցողի ուշադրությունը:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս մեծահռչակ ուսմունքների ըմբռնման պատմական փորձը, խորաթափանց տեսություն յուրացնելու կամք ու բարեխղճություն ունեն ոչ բոլորը: Իբրև բացառիկ անհատականություն՝ ՆՇՂԵՒԻ դրսևորել է իրականության այնպիսի խորատեսություն, որն անմատչելի է հատկապես հոգեմտավորական նրա կենսա-փորձին անհաղորդներին, որքան էլ վերջիններիս հավակնության աստիճանը բարձր լինի: Երկրորդ՝ ենթակայական հակումների, դիրքորոշումների պատճառով հատկապես մերկ օգտապաշտները առհասարակ չեն կարողանում հաղթահարել ընկերային դիրքի, աշխար-հայացքային հակվածության, դասային պատկանելության և առհասարակ հանրա-ընկերային խմբերի հետ կապված բարդություններն ու նախապաշա-րումները: Այլ կերպ ասած՝ ՆՇՂԵՒԻ ամենայն հավանականությամբ անհասկանալի պիտի մնա ազգային աշխարհայացքից զուրկ մեծահարուստ խավին, որը, միաժամանակ, Ձորավարի ռազմական հաղթանակներն ու անունը շահարկողների մեջ առաջիններից է: Հետևաբար բնականոն կարելի է համարել այն իրողությունը, որ ինչպես ռազմաճակատում ՆՇՂԵՒԻ ունեցավ բազմաթիվ հակառա-կողներ ու թշնամիներ, ի դեմս կայսերական մեծապետական բանակների, այնպես էլ հոգեմտավոր ճակատում ի հայտ են գալիս ընդդիմախոսներ, մոլորյալներ ու խեղա-թյուրողներ, որոնք փորձում են նրա ուսմունքն ու աշխարհայացքը կախման մեջ դնել օտար փաշայական համակարգերից, նրան դարձնել անհավատ, հեթանոս, հակաքրիստոնյա: Պատահական չեն այդօրինակ մոտեցումները, որովհետև տասնամյակների ընթացքում աթեիզմից թունավորվածներն առանց զղջումի

և ապաշխարության ի վիճակի չեն հասկանալու այնպիսի համարյալ իմաստախոհություն, ինչպիսին ցեղակրոնությունն է:

Ազգային միաբանության խնդրի առնչությամբ առանձնա-պես կարևոր է Քրիստոսի և քրիստոնեության ՆՇՂԵՒԻ արժեքներն ու լուսաբանումը, որն ամնիջականորեն կապվում է հայոց ազգային-հոգևոր կերտվածքի, ներքին ուժերի ու կարողությանց ի հայտ բերելու և հունավորելու, դրանց զարգացմանը ճիշտ ընթացք տալու հարցերին: Քրիստոնեությունը լոկ դրսից «իմացող», քրիստոնեական արժեքներին ու սրբություններին անհաղորդները հաճախ չհիմնավորված մտքեր ու դրույթներ են առաջադրում ՆՇՂԵՒԻ աշխարհայացքի, նրա հոգևոր դիրքորոշումների և քրիս-տոնեությանը վերաբերող նրա տեսակետների մասին:

ՆՇՂԵՒԻ երկերի և նրա կենսագործունեության ուսումնա-սիրությունն ի հայտ է բերում ոչ միայն քրիստոնեական «տարրի» առկայությունը նրա աշխարհայացքի մեջ, այլև այն, որ քրիստոնեությունը փաստորեն նրա արժեքային համակարգի հենասյուներից մեկն է: ՆՇՂԵՒԻ վերաբերմունքը քրիստոնեությանը՝ որպես մարդկային բարեկրթության և քաղաքակիրթ համակեցության բարձրագույն եղանակի, աներկբայորեն դրական է: ՆՇՂԵՒԻ-մտավորականի համար խնդիրն ոչ թե քրիստոնյա լինելն է (անտարակուսելի է, որ նա եղել է հավատավոր քրիստոնյա), այլ քրիստոնեական բարեկրթությունը որպես կենսական ուժի աղբյուր ազգին ու ազգային վերելքին ծառայեցնելը:

ՆՇՂԵՒԻ ուսմունքի խեղաթյուր մեկնաբանություններն ու չարաշահումները առիթ տվեցին քննության առնելու մեծ մտավորականի վերաբերմունքը քրիստոնեությանը, իմաս-տազննելու նրա հոգևոր-մշակութաբանական հայացքներն ու աշխարհայացքային սկզբունքները:



յունն էլ նրանցից ստացա: Ինձ վստահում էին:

Ես որտեղ լինեմ, նրանք էլ լինելու էին այնտեղ:

Եթե ասեի՝ «Գնանք», գալու էին. «Մնանք»՝ կմնային:

Մնալ եւ դիմադրել
Շատ բարի, բայց ո՞ր գնալ:
Հայաստա՞ն:

Ինչպե՞ս կարող էր ինձ նման մեկը, որն ընդվզում է անօրինակությունների դեմ, հանդուրժել այնտեղ կատարվող անօրինականությունները: Գուցե այն-տեղ ինձ ավելի մեծ փորձություններ էր էին սպասում:

Իսկ եվրոպական երկրներ գնալը ինձ համար չէր:

Ի վերջո, ինձ նման երեք օրով Արեւմուտք մեկնելու չորրորդ օրը վե-րադառնալու մտահոգությամբ սրտնե-ղությունից տանջվող եւ իր երկիրը կարոտող մեկն ի՞նչ էր անելու եվրո-պայում:

Հարմարավետ կյանքն ինձ համար չէր

Նախ «դժոխքի կրակները» թողած «պատրաստի դրախտում» հանգրվա-նելը չէր համապատասխանում իմ էությանը:

Մենք դժոխքը դրախտի վերածելու հավակնության տեր էինք:

Թուրքիայում մնալը ե՛լ մեր իսկա-կան ցանկությունն է, ե՛լ հարգանքից բխող անհրաժեշտություն՝ ծանոթ-անծանոթ այն հազարավոր մարդկանց նկատմամբ, ովքեր Թուրքիայում ժո-ղովրդավարության պայքար են մղում ու թիկունք կանգնում մեզ:

Շարունակելու էինք մնալ եւ դիմադրել

Եթե մենք ստիպված ճամփա բռնեինք... ճանապարհ էինք ընկնելու այնպես, ինչպես 1915 թ.-ին... Մեր պապերը... Առանց իմանալու դեպի ուր... Քայլելով այն ճանապարհներով, ինչ նոտաբոբիկ իրենք են անցել... Տանջվելով եւ ապրելով նրանց վիշտը...

Ահա այսպիսի կանխազգացողու-թյամբ լքելու էինք հայրենիքը: Գնալու էինք այնտեղ, որտեղ կտանեին մեր ոտքերը, այլ ոչ թե սիրտը կկամենար... Ուր էլ որ լինեին...

Երկչոտ եւ ազատ

Հուսամ, որ երեք ստիպված չենք լինի այդպես հեռանալ:

Դրա համար ունենք բավականին հույս եւ մեծ պատճառ:

Հիմա արդեն դիմում են Մարդու իրավունքների եվրոպական դատա-րան: Չգիտեմ, թե դատավարությունը քանի տարի կտեւի: Իմացածս այն է, որ դա ինձ մասնակի մխթարում է, գոնե մինչեւ դատավարության ավարտը կշարունակեն բնակվել Թուրքիայում:

Անշուշտ, եվրոպատարանի՝ իմ օգ-տին ընդունած որոշմամբ ես խիստ կուրախանամ եւ այլեւս ստիպված չեմ լինի մտածել երկիրը լքելու մասին:

Հավանական է, որ 2007 թ.-ն ինձ համար ավելի ծանր տարի լինի:

Կշարունակվեն դատավարություն-ները, նոր գործեր կհարուցվեն իմ դեմ: Ո՞վ իմանա՞ ես դեռ ինչպիսի անար-դարությունների կբախվեմ:

Բայց եւ այնպես, իմ միակ երաշ-խիքը եւ համարելու եմ հետեւյալ ճշմարտությունը. «Այո, ես վախվորած աղավաղ հոգեվիճակում եմ, սակայն գիտեմ, որ այս երկրում մարդիկ աղավ-նիների ծեռք չեն տալիս»:

Աղավնիները շարունակում են ի-րենց գոյությունը քաղաքի խորքերում, նույնիսկ մարդկանց խիտ բազմության մեջ:

Գուցե մի քիչ երկչոտ, բայց եւ ան-կախ:

Թուրքերենից թարգմանությունը՝
ՀԱԿՈՐ ՀԱՔՐՅԱՆԻ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2006թ. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակը և Հայաստանի գրողների միությունը համատեղ հայտարարել էին կոռուպցիայի դեմ գրված գրական-գեղարվեստական, հրապարակախոսական ստեղծագործությունների մրցույթ:

ՀԳՄ նախագահ Լ. Անանյանը և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար Վ. Պրյախինը «Լավագույն բանաստեղծության» մրցանակը հանձնեցին Մանվել Միկոյանին: «Լավագույն արձակ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Արման Ամրիկյանը, իսկ Մանվել Կոսյանը՝ «Դրամատուրգիա» անվանակարգում: «Հրապարակախոսություն» անվանակարգում հաղթող են ճանաչվել Մարգո Ղուկասյանը և Հրաչյա Մաթևոսյանը:

Մրցանակակիրներին տրվեցին վկայականներ և պարգևավճարներ:



ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԻ ԱՌԹԻՎ ՄՐՑԱՆՑ ԸՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅ ԸՆԽՄԱՏԻՍՏՆԵՐԻՆ

ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆ



Հայկական շախմատի առաջատար՝ գրոսմայստեր Լևոն Արոնյանը փայլուն հաղթանակ տարավ հոլանդական Վեյք ան Ձեե քաղաքում անցկացված «Կորուս» շախմատի միջազգային գերմրցաշարում, որը ՖԻԴԵ-ի վարկամիջային առյուսակում կրում էր 19-րդ կարգը:

Վերջին տուրում Արոնյանը հանդիպում էր ռուսաստանցի գրոսմայստեր Սերգեյ Տիմյակովին: Մրցաշարում առաջին տեղը գրավելու համար՝ մեր շախմատիստին միմիայն հաղթանակ էր անհրաժեշտ: Նա հրաշալի իրագործեց նշված առաջադրանքը՝ որևէ հնարավորություն չթողնելով մրցակցին: Այդպիսով, վաստակելով 8,5 միավոր, հայ գրոսմայստերը միավորներով հավասարվեց բուլղարացի Վեսելին Տոպալովին և Ադրբեջանը ներկայացնող Թեմուր Ռաջաբովին: Քանի որ Արոնյանը լրացուցիչ ցուցանիշներով գերազանցել էր մրցակիցներին, ապա ճանաչվեց մրցաշարի հաղթող:

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈՐՅԱՆ



Ջիբրալթարում անցկացված շախմատի միջազգային մրցաշարում գերազանց հանդես եկավ գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը:

Նախավերջին՝ 8-րդ տուրից հետո Հակոբյանը վաստակել էր 6,5 միավոր և Ուկրաինացի ներկայացնող գրոսմայստեր Յուրի Կուզուբովի հետ բաժանում էր 1-2-րդ տեղերը: Վերջին տուրում երկու առաջատարներն ուժերը չափեցին միմյանց հետ: Մեր շախմատիստը սպիտակ խաղաքարերով հիանալի անցկացրեց մենամարտը, այն ավարտելով իր օգտին: Վաստակելով 7,5 միավոր՝ հայ գրոսմայստերը անհասանելի դարձավ մրցակիցների համար և 172 մասնակիցների մեջ միանձնյա գրավեց առաջին տեղը:

Հետաքրքրական է նշել, որ վելյցարական մրցակարգով անցկացված մրցաշարի խաղարկված ինը տուրերում Հակոբյանը միավորների կորուստներ էր ունեցել միայն կին գրոսմայստերների հետ պայքարում (պարտվել էր ամերիկուհի Իրինա Կրուչին և ոչ ոքի խաղացել Քաթարը ներկայացնող չինուհի Չժու Չենի հետ), իսկ ահա՝ հանդիպած բոլոր տղամարդկանց հետ պայքարում միայն հաղթանակներ էր տոնել:

ՊԱՐԻԻԵԼ ԱՍՐԳՅԱՆ



Հայաստանի շախմատի օլիմպիական հավաքականի անդամ, գրոսմայստեր Պարիիել Սարգսյանը հոլանդական Վեյք ան Ձեե քաղաքում անցկացված «Կորուս» շախմատի միջազգային մրցաշարի «Բ» խմբի առաջնությունում գրավեց երկրորդ հորիզոնականը, իրենից առաջ թողնելով միայն ուկրաինացի Պավել Ելյանովին:

Հայ գրոսմայստերը, վերջնագծում հավաքելով 8 միավոր, 2-4-րդ տեղերն էր բաժանում չինացի Բու Սյանչժիի և ռուսաստանցի Գմիտրի Յակովենկոյի հետ: Մրցավարներին հարկ եղավ հաշվարկել լրացուցիչ ցուցանիշները՝ մրցանակային տեղերը որոշելու համար: Պարզվեց, որ այդ չափանիշներով առավելագույն միավորներ է հավաքել Սարգսյանը, այդպիսով արժանանալով հեղինակավոր մրցաշարի երկրորդ մրցանակին: Երրորդ տեղը զբաղեցրեց չինացի շախմատիստը:

ԱԿՍԵԼ ԱՐՈՒՆԻԱՆՅԱՆ

Մանվել Միկոյան Դիետիկ ազգավներ

1. Գիշատիչների մաֆիան՝ իր չգրված օրենքներով, բնավ չի զգում կարիք սահմանադրական փոփոխությունների: Խիստ հաշվառված են զազանների ու դժբախտ պատահարների զոհ դարձած կենդանիների լեշերը, որոնց տերերը հայտնի են վաղօրոք: Նրանք չեն ներում երբեք կարգը խախտողներին: Իսկ ազգավները հիշում են երանելի ժամանակները, երբ մաֆիայում դեռևս կային սնահավատներ

ու «ժողովրդավարներ»,

որ հաշվի էին առնում իրենց կեղծոցը եւ նախահարձակ լինելու անկանխատեսելիությունը... Երբ բացվում է խոշտանգված անտառի գորշ առավուտը, ազգավների ակաջներում հնչում է իբրև վերջնագիր.

-Կոկոռոց բարբառո հանապատի...

Խեղճ ազգավներ, նրանք ստիպված են սնվել հատապտուղներով, կրծել շագանակ ու կաղին անիծելով Մարդկանց երկիրը, ուր անարդար ու դաժան են օրենքները, ուր զարմանալիորեն ավելի են գնահատված ավանակներն ու ջորիները, խղճուկ ու ողորմելի այլ կենդանիներ:

2. -Վերջ մաֆիային,

այսօրվանից սկսում ենք պայքարը նրանց դեմ,- հերթական թրեյնինգի ժամանակ անսպասելի գոչեց «Ազգավներ առանց սահմանների» հլ-ի նախագահը...

Բուրդը կարկանդեցին, ապա ոգեւորված արձագանքեցին.

-Վերջ մաֆիային:

Կազմվեցին մարտավարական ու ռազմավարական ծրագրեր, մշակվեց գործողությունների հաջորդականությունը:

Սակայն հաջորդ օրն իսկ հլ-ի նախագահին բերման ենթարկեցին ուր որ հարկն է, եւ նա «շտապ գործերով» մեկնեց արտասահման:

Կարճ ժամանակ անց Ամուկոր ափ պետությունում գտնվող «մայր» կազմակերպությունը սկսեց առատորեն ֆինանսավորել ուսուցողական սեմինարներ, որոնց ժամանակ ազգավները սերտում են նմանատիպ պայքարի միջազգային փորձը, ընդմիջումներին ստանում լեշի կտորտանքներ, ժամանակավորապես մոռանալով իրենց պայքարի մասին:

Իսկ հլ-ի փոխնախագահ ազգավը վերջերս «դժբախտ պատահարի» զոհ դարձավ (նախորդ օրը նա հայտարարել էր.

որ իրենց շեֆը գաղտնի կապեր ունի զազանների մաֆիայի հետ):

-Նրա սիրտը բարբախտ էր ազգավների ցավերով ու հոգսերով, նա Մեծ Ազգավ էր եւ կհիշվի սերնդեսերունդ,- հուղարկավորության ժամանակ ասացին հանգուցյալի մարտական ընկերները:

3. Առավել խելացի գտնվեց նրա եղբայրը՝ ստեղծելով «Դիետիկ ազգավներ» հասարակական կազմակերպություն, որը գրամետներ է ստանում անձամբ մաֆիայի շեֆի միջնորդագրով:

-Մենք պետք է ինտեգրվենք եվրոպական ազգավներին,- սիրում է կրկնել նա,- քաղաքակիրթ աշխարհը չի ընդունում մեր պահվածքը,

մեր օրենքները հնացած են, չկան այլևս նախկին անտառները, չկան նախկին զազաններն ու «բնական պաշարները», իսկ մեր բնաջնջվող անտառներում մոր օրենքներ պետք է գործեն:

«Դիետիկ ազգավները» նույնիսկ հանրահավաք ու ցույց կազմակերպեցին ընդդեմ զազանային օրենքների, հանուն քաղաքակիրթ կենսակերպի, որոնց ծախսերը դարձյալ հոգում էր զազանների մաֆիայի փորձված շեֆը,

որպեսզի կանխի առավել լուրջ ու վտանգավոր հանրահավաքներն ու ցույցերը: Սակայն այստեղ էլ չխուսափեցին զոհերից. «Դիետիկներին» արդարադատության հանձնախմբի նախագահն իմացել էր

(եւ նույնիսկ բերանից թռցրել), որ իրենց շեֆն արդեն լեշի պահածո է արտահանում շատ երկրներ, նույնիսկ իսկա անտառամաս է գնել Հյուսիսային Աֆրիկայում...

Խեղճը չհիմնացավ եւ կախվեց Ազատության բացառի միակ ծառից՝ փրկելով իրեն եւ իր գերդաստանը դաժան հաշվեհարկարից:

-Նա մեր կազմակերպության առաջամարտիկն էր, երկրի անհամար ցավերին չհիմնացավ նրա զգայուն ու փխրուն հոգին, մենք պետք է շարունակենք նրա կիսատ թողած գործը,

պետք է պայքարենք մինչեւ վերջ,- կտուցները վեր պարզած երդվեցին նրա մարտական ընկերները հուղարկավորության ժամանակ:

4. Գիշատիչների մաֆիան ըստ արժանվույն գնահատեց հանուն պայծառ գաղափարների «նահատակված» ազգավներին, նրանց հուշարձանները պատվիրվեցին լավագույն վարպետներին, ապա տեղադրվեցին նշանավոր բացատներում, իսկ դպրոցական ազգավները

տոն օրերին ոտանավորներ են արտասանում նրանց մասին: ...

Գիշատիչների մաֆիան իր չգրված օրենքներով, շարունակում է «փշոտ» ճանապարհը դեպի Պայծառ Ապագա, մշակում եւ իրագործում բազմաթիվ ծրագրեր դիետիկ ազգավներին աջակցելու համար, միայն թե նրանք չվերադառնան իրենց «տխուր» անցյալին, չպահանջեն «անհմարինն ու անկարելին», միայն թե դատարկ անկյուններ չառաջանան ազգավագիների մասին զօր ու գիշեր մտածողների իսկա ու անչափելի որկորներում:


ՍԻՐԵԼԻ ՍՈՒՐԲԸ՝ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐ

Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն նշվեց փետրվարի 3-ին:

Ս. Սարգիս զորավարը հայոց ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի և 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Ս. Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան և սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերագանց սպարապետ էր, այլև հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյանները, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացոյի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու դեմ հալածանքները, Աստվածային հայտնությանը հրաման անելով հեռանալ կայսրության սահմաններից, Ս. Սարգիսն իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է դեպի Պարսկաստան, Հայոց արքան, որպեսզի իր երկիրը զերծ պահի հարձակման վտանգից, հորդորում է Սարգիսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է նրան և նշանակում զորագնդերի հրամանատար: Ջորականների շատերը, տեսնելով քաջ զորավարի բարեպաշտությունը, նրա վարքով վկայված նվիրումն առ Աստված եվ աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից և դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը և զոհ մատուցել: Ջորավարը մերժում է՝ ասելով. «Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Արարողը երկնքի և երկրի: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն. հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»: Այդ խոսքերից հետո Ս. Սարգիսը կործա-



նում է բազմից: Ջայրացած ամբոխը հարձակվում է Ս. Սարգիսի և նրա որդու վրա: Առաջինը նահատակության պատկան ընդունում է որդին՝ Մարտիրոսը: Ս. Սարգիսը բանտարկվում է և աներեր մնալով իր հավատքի մեջ՝ զխսատվում: Նահատակվելուց հետո Ս. Սարգիսի մարմնի վրա լույս է իջնում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաև Ս. Սարգիսի տասնչորս զինակիցները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում են Համիան քաղաքում: Քանի որ Ս. Սարգիսը հայոց մեջ ամենասիրված սրբերից է, պատահական չէ, որ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մատուցները տեղափոխում է Կարբի գյուղ (Աշտարակի շրջան), ամփոփում և կառուցում երանելու անունը կրող եկեղեցի:

Տոնը՝ ավանդույթի սկիզբ

Հաճախ կարելի է հանդիպել երիտասարդների, որոնք կյանքի ընկեր ընտրելու նպատակով զանազան միջոցների են դիմում, որոնցից մեկն էլ Սուրբ Սարգիսի տոնից առաջ «պաս» պահելն է, այսինքն՝ մարմինը կենդանական ծագում ունեցող կերակուրներից զրկելն ու նեղելը: Սակայն նրանցից շատերն է հայտնի, թե ո՞վ է Սուրբ Սարգիսը և ինչու՞ են երիտասարդները հատկապես նրան դիմում:

Մինչ այս հարցերին անդրադառնալը, ընթերցողին իրազեկենք, որ տոնին նախորդող պահքն ամենևին էլ կապ չունի սրբի հետ, մասնավորապես Հայոց եկեղեցին չունի սրբերի տոների հետ կապված պահոց օրեր: Պահքը միայն Տերունի է, իսկ սրբի տոնին իրականում նախորդում է Առաջավորաց պահքը, որ հնգօրյա է և սահ-

մանվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից, երբ հայերը քրիստոնյա դարձան և պատրաստվում էին ազգովին մկրտվել Արածանի գետում:

Ինչ վերաբերվում է Սուրբ Սարգիսին, ապա նա, ինչպես և բոլոր սրբերը, բարեխոսում է ամենքիս համար, բայց «երիտասարդաց և զորաց մշտարթուն պահապան» է կոչվում, քանի որ ինքը քաջ զորական էր և աղոթքով մահից փրկեց իր պատանի որդուն Մարտիրոսին: Սրբին հաճախ նաև «եռագահաս» են կոչում, քանզի եռակի արագ է օգնության հասնում իր բարեխոսությանն ապավինողներին և կատարում նրանց խնդրանքները:

Այս դարավոր ավանդույթին հավատարիմ մնալով, Հայոց եկեղեցին նրան տոնելի սրբոց շարքին է դասել և մեծ շուքով տոնում է պատվական այս սրբի հիշատակն ու հաճախակի հանդիսություններ կազմակերպում: Այդ օրը Սուրբ Պատարագ է մատուցվում նրա անունը կրող բոլոր եկեղեցիներում: Ուստի ամսասն չէր նաև Վանաձորի Սուրբ Սարգիս եկեղեցին, ուր փետրվարի 3-ին պատարագիչ էր Տեր Ստեփանոս քահանա Մարգարյանը: Պատարագի ավարտին ներկայից սրտառու խոսք հղեց Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը և օրհնեց երիտասարդներին՝ մաղթելով քրիստոնեական կենցաղավարություն, աստվածահաճո կյանք և լուսավոր գալիք: Առաջնորդի օրհնությունն առած շատ երիտասարդներ քայլերն ուղղեցին դեպի Սուրբ Գրիգոր Նարեկացի տաճար, ուր տեղի հոգևոր հովիվ, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տեր Վահան քահանա Ազարյանի ջանքերով կազմակերպվեց ցերեկույթ, որի ընթացքում իրենց տաղանդն ու արվեստը ներկայացրին քաղաքի երիտասարդ ստեղծագործողները՝ նկարիչներ, գրողներ, երաժիշտներ, ասեղնագործողներ և կիրառական արվեստով զբաղվողներ... Ինչպես ասում են, տաղանդը մարգարիտ է, գտնողը՝ իմաստուն. միջոցառումը տպավորիչ էր նաև նրանով, որ այն վարում էր ինքը՝ Արժանապատիվ Տեր Հայրը, և ջերմագին խոսքերով աշխուժացնում մթնոլորտը: Նա նշեց, որ այսուհետ ամեն տարի ավելի մեծ շուքով կնշվի տոնը, կընդգրկվեն ավելի մեծ թվով երիտասարդ ստեղծագործողներ, և միջոցառումը կդառնա բարի ավանդույթ:

ՆԱԻՐԱ ՊԵՊԱՆՅԱՆ

Տ Ե Ա Ռ Ն Ը Ն Դ Ա Ռ Ա Ջ

Տոնանունը բաղկացած է երեք բառերից և նշանակում է «Տիրոջն ընդառաջ» (զմայ): Մովսեսական օրենքով՝ Տեառնընդառաջի հանդիսության իմաստը կայանում էր նորածնին իր ծննդից 40 օր հետո տաճար տանելու և Աստծուն ընծայելու մեջ:

Տոնը կոչվում է նաև «Գալուստ քառասորեայ ի տաճարն»:

Նորածնին «քառասունքից հանելու» հայկական սովորությունը տոնական այս ավանդության ակնարկությունն է:

Տեառնընդառաջը տոնն է նաև Սիմեոն Ծերունու վկայության, թե տաճար բերված Մանուկը Հին Կտակարանի մարգարեների գուշակած Մեսիան էր:

Տեառնընդառաջի թվականն անշարժ է, անգամ եթե Քառասորդաց խիստ պահքի շրջանում պատահի, անփոփոխ տոնվում է փետրվարի 14-ին, արևելյան ոճով, և կան փետրվարի 2-ին, արևմտյան ձևով:

Տոնն ունի նախատոնակ և անդաստան (օրհնություն) կրակի շուրջ: Սովորություն կա այս առթիվ

մոմօրհներ կատարել:

Տոնը, ըստ ոմանց, ներկա ձևի մեջ ունի նաև հեթանոսական երանգ. թվում է, Տեառնընդառաջի նախատոնակին կրակ վառելու ավանդությունը Տիր աստծուն նվիրված տոների արձագանքն է՝ արդեն քրիստոնեական գունավորմամբ...

Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ Տեառնընդառաջը հռչակվել է **Նորապսակների օրհնության օր**:

Ա. ՍԱՐ.

ՁՄԵՌԱՅԻՆ ՀԱՎԱՔՆ ԱՎԱՐՏՎԵՑ

2007 թվականի հունվարի 10-ից 20-ը Վանաձորի «Արգիշտի» հյուրանոցում տեղի ունեցավ **Մարդու իրավունքների հայկական դպրոցի** (ՄԻՀԴ) 2007 թվականի ձմեռային հավաքը, որին ընդհանուր առմամբ մասնակցեցին «Իրավունք» առարկայաշարի 53 ուսուցիչներ՝ Հայաստանի բոլոր մարզերից:

Հունվարի 19-ին կազմակերպվեց փակման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում սովորողներին ողջույնի ու բարեմաղթանքի խոսքեր հղեցին Լուու փոխնախագահ Զոհրաբ Թորոսյանը, մարզպետարանի քարտուղարության պետ Արշավիր Ղուկասյանը, Վանաձորի քաղաքապետի օգնական Խորեն Գասպարյանը:

Դպրոցի յոթ սովորողներ ստացան «Իրավունք» ուսումնական բնագավառի մասնագետի որակավորմամբ ավարտական վկայականներ՝ ՄԻՀԴ լրիվ դասընթացը ավարտելու կապակցությամբ:



Փոխնախագահ Զոհրաբ Թորոսյանը հանձնում է վկայականները

ՄԻՀԴ մեկամյա ուսումնառության ընթացքը բաղկացած է 3 առկա հավաքներից (ընդամենը՝ 30-օրյա տևողությամբ), ինչպես նաև 11-ամսյա հեռակա ուսուցումից և կազմակերպվում է համագործակցային (կոլեկտիվ) ուսուցման եղանակով, որը կառուցված է սովորողների միջև փոխուսուցման և փոխհամագործակցության հիմքերի վրա:

Ուսուցումը կազմակերպում և իրականացնում է ՄԻՀԴ ուսուցանողների, ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մեթոդաբանների և փորձագետների թիմը:

Ուսման ընթացքում սովորողներն օգտվում են ՀՄԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի տեղեկատվական հարուստ բազայից և ծառայություններից:

Ծրագիրը իրականացվում է ՀՄԻԿ-ի կողմից՝ **«Հայաստանում իրավական մշակույթի զարգացում»** եռամյա ծրագրով միջազգային **«Միջկենդեցական համագործակցության զարգացման կազմակերպության»** (ICCO) աջակցությամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել ՀՄԻԿ-ի համացանցի էջ՝ www.acrpc.am, ինչպես նաև դիմել **Արայիկ Պապիկյանին** էլ. փոստ՝ apapikyan@acrpc.am հեռ.՝ (0322) 2-29-67, ֆաքս՝ (0322) 4-47-81

ՈՒՍԱՆԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Փետրվարի 2-ին **Վանաձորի մարդու իրավունքների գրադարանում** կազմակերպվեց հերթական թեմատիկ ֆիլմի ցուցադրումը: «Տեղեկատվության մատչելիությունը Հայաստանում» ֆիլմը դիտելուց առաջ Գուգարթի թիվ 2 դպրոցի աշակերտները ծանոթացան գրադարանից օգտվելու կարգին, իսկ դիտումից հետո կայացավ փոքրիկ բանավեճ-քննարկում:

Նման միջոցառումներ նախատեսվում են կազմակերպել ՀՄԻԿ-ի մարդու իրավունքների գրադարանային ցանցի մյուս գրադարաններում ևս, որոնք գործում են նաև

հանրապետության հինգ մարզերում, մասնավորապես՝ Դիլիջան, Հրազդան, Արտաշատ, Գավառ և Սևան քաղաքներում:

Հարգելի ընթերցողներ, ինչպես արդեն Ձեզ տեղեկացրել ենք, Վանաձորի մարդու իրավունքների գրադարանում թեմատիկ ֆիլմերի դիտումը կազմակերպվում է յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը, ժ.15.00-ին:

Ձեզ ևս սիրով հրավիրում ենք մասնակցելու:

Վանաձորի մարդու իրավունքների գրադարան

ԿԱՐԾԻՔ

«Փախստականների և տեղահանվածների արժանապատիվ ապրուստի իրավունք»-ի հարցի վերաբերյալ

կնվազեցվեին այն տանտերերի բնակարանները, ովքեր իրենց բնակարանները կտրամադրեին փախստականներին ու տեղահանվածներին: Չէ՞ որ շատերը, որոնց ընտանիքի անդամները գտնվում են հանրապետությունից դուրս, այժմ միայնակ զբաղեցնում են երկու և երեք սենյականոց բնակարաններ: Հարկավոր է օժանդակել այն տանտերերին, ովքեր հնարավորություն ունեն որոշ շինարարական փոփոխությունների արդյունքում ավելացնել բնակման կետերը՝ փախստականներին վարձով տրամադրելու նպատակով: Այսպիսով, կարելի է հասնել այն բանին, որպեսզի կառավարական հաստատությունները արդյունավետ հսկողության տակ վերցնեն բնակատեղության շահագործումը, որը կօգնի կարգավորել բնակարանի կարիք ունեցող անձանց կամ ընտանիքների ապահովման գործընթացը:

ՍՈԿՐԱՏ ԱՅՎԱԶՅԱՆ
Ինժեներ, Հայրենական պատերազմի վետերան

ԻՆՉ ԱՆԵԼ...

Վերջին տասնամյակների ընթացքում բնակարանաշինությունը քաղաքներում, ինչպես նաև մարզերում անց է կացվել առանց հաշվի առնելու առկա բնակֆոնդը և նորամուծության հնարավորությունները՝ բնակելի ու հարակից շինությունների պլանավորման ժամանակ: Այս միտումները հատկապես ցայտուն կերպով դրսևորվում են մասնավոր հատվածում: Ծի ունեցողների մեծ մասում բնակարանները ձևափոխվել են առևտրային օբյեկտների: Որոշ շինություններ, որոնք ժամանակին նախատեսված էին բնակեցման համար, ձևափոխվել են վարչական կառույցների ու սեփականաշնորհվել: Ամերթաշատ է դրանց շահագործման հարցը վերանայել:

Ներկայումս անհրաժեշտ է անցկացնել այն շինությունների գույքագրումը, որոնք հնարավոր է ձևափոխել՝ բնակելի դարձնելու համար: Դրական նախաձեռնություն կլինեք այնպիսի մի օրենքի մշակումը և կիրառումը, ըստ որի

Հրատարակության 9 տարի
Հիմնադիր և իրատարակիչ՝
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Դեռ.՝ (+374 322) 2-29-67
Ֆաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ ic@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա ՍՄՐՈՒՄԱՆ
Խմբագիր՝ Ալեսյա ՍՄՐՈՒՄԱՆՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ Նարինե ԱՇՐՅԱՆ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Թերթը տպագրվում է Վրաստանում եւ Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի
պատվիրակության հովանավորությամբ:

«Բյուրակն» Կրթահամալիրը Վանաձորում

2006թ. սեպտեմբերի 1-ին ՀՄԻԿ-ի նախաձեռնությամբ Վանաձորում բացվեց Երևանի **«Բյուրակն»** կրթական համալիրի մասնաճյուղը: Կրթահամալիրը, որը գործում է ուսուցման կազմակերպման նոր, համագործակցային եղանակով, հիմնվել է 2004 թվականին, Երևանում: Այն արտոնագրված է ՀՀ ԿԳ կողմից, և ուսումնական ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է ՀՀ հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան: Ռեսուրսները կազմակերպվում է տարրական, միջին և ավագ դպրոցներում:

Կրթահամալիրի Վանաձորի մասնաճյուղը ներկայումս տեղակայված է ՀՄԻԿ գրասենյակի տարածքում:

Մասնաճյուղում ուսուցումը առայժմ կազմակերպվում է միայն տարրական դպրոցի աշակերտների համար:

2007թ. սեպտեմբերից կգործի նաև միջին դպրոցը, իսկ 2008-ից՝ ավագ դպրոցը:

Կրթահամալիրում ուսուցման կազմակերպման առանձնահատկություններն են.

- յուրաքանչյուր աշակերտի համար, պետական չափորոշիչներին համապատասխան, կազմվում է անհատական ուսումնական ծրագիր, որը պետք է յուրացվի գերազանց,

- ուսումնական պրոցեսի ընթացքում աշակերտը սովորում և սովորեցնում է, որն ավելի է ամրապնդում նյութի յուրացումը: Ռեսուրսները կազմակերպվում է անհատական, խմբային և փոփոխական զույգերով (գերակշռում է աշխատանքը փոփոխական զույգերով),

- ուսումնական պրոցեսը բաժանված է դասաժամերի և ուսումնական նյութը յուրացնելու համար չկա ժամանակի սահմանափակում: Ռեսուրսները կենտրոնացված է նյութի յուրացման որակի վրա: Սա հնարավորություն է տալիս ապահովել աշակերտի առաջադիմությունը իր հնարավորություններին համապատասխան, ինչպես նաև՝ առավելագույն շահագրգռվածությունը (մոտիվացիա) ուսման նկատմամբ,

- իրականացվում են ընթացիկ (պարբերական) և տարեվերջյան գնահատումներ, որոնք նպատակ ունեն վերահսկելու և գնահատելու աշակերտի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համապատասխանությունը ՀՀ պետական հանրակրթակարգով նախատեսված չափորոշիչներին,

- մեծ ուշադրություն է հատկացվում աշակերտի հոգևոր և մշակութային զարգացմանը, կրթահամալիրի սաների միջև թիմի ձևավորմանը,

- ուսուցումը երկարօրյա է՝ 9.00-16.00 (սննդի երկու ընդմիջումով),

-աշակերտների համար ապահովվում է ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից զերծ մթնոլորտ:

Կրթահամալիրում ուսուցումը վճարովի է: Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել հետևյալ հեռախոսահամարներով՝
(010) 28 40 80 (Կենտրոն),
(0322) 2 29 67, 4 47 81 (Վանաձորի մասնաճյուղ):

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Եթե դուք ցանկանում եք պարբերաբար անվճար ստանալ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը, խնդրում ենք լրացնել սույն կտրոն-ձևաթուղթը և ուղարկել խմբագրություն

Բաժանորդ _____
ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆ կամ կազմակերպության ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հասցե _____
Մարզ, քաղաք (գյուղ), շենք (տուն), բնակարան

Հեռախոսահամար _____

Էլ. փոստ _____

Բաժանորդագրվել կարելի է նաև Էլ. փոստով տեղեկացմամբ՝
ic@acrpc.am, ինչպես նաև՝
Թվանոցահարելով (0322) 2 29 67 և (0322) 4 47 81

Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Մ

Սեր թերթի 2006 թ. դեկտեմբերի 29-ի (թիվ 3) համարում, խմբագրակազմի անուշադրության պատճառով, 7-րդ էջում առկա են բացթողումներ. վերևի նյութի վերնագիրը կարդալ՝ **Թանգարաններն արվեստի պատմության համը վկաներ լինելու համար չեն**, իսկ ներքևի նյութի հեղինակի ազգանվան տակ՝ **թանգարանի գիտաշխատող**:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է ամենուրեք